ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 167-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՄՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 02-074-0007-0008 կադաստրային ծածկագիրը կրող 0.4696 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողամասը աճուրդային կարգով՝ առանց գործառնական նշանակությունը փոփոխելու, օտարվել է:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսքրքի 3-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և 56^{2}-րդ հոդվածներով՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Ներքին Սասնաշեն համայնքի ղեկավար Անդրանիկ Շամոյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ երկու հարյուր հազար դրամ, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:
2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Ներքին Սասնաշեն համայնքի ղեկավար Անդրանիկ Շամոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ներքին Սասնաշեն համայնքի ղեկավար Անդրանիկ Շամոյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ